ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

Առաջադրանքներ

1. Նախադասություններն ընդարձակի՛ր՝ ենթակայի՝ տրված հարցերին պատասխանող լրացումներ տեղադրելով (ո՞ւմ, ինչպիսի՞, ո՞ր, ինչի՞):

ա) Երկնում էր երկինքը:

բ) Երկնում էր երկիրը:

գ) Վազում էր պատանեկիկը:

դ) Երկնում էր ծովը:

ե) Ծուխ էր ելնում:

զ) Աչիկներն էին արեգակներ:

2. Տրված տեքստից առանձնացրո՛ւ ընդարձակ նախադասությունները և համառոտի՛ր:

Իրիկնադեմին իջևանատան նկուղ-սեղանատանը նստած արքան որդան կարմիրի *օշարակ* էր խմում, երբ ներս մտան երկու գուսաններ: Նրանք ողջունեցին ու նստեցին Արտաշեսի կողքին: Գուսաններից մեկը արքային հարցրեց, թե ո՞ր կողմերից է:

– Վանի,– պատասխանեց արքան:

3. Տրված տեքստից առանձնացրո՛ւ պարզ և բարդ նախադասությունները:

Հնէաբանն ուշադիր զննում էր տեղանքը՝ հուսալով հայտնաբերել հողածածկ ամրոցը: Երեխաները բանջարանոցից հավաքում են կարտոֆիլ, կաղամբ, վարունգ: Անձրևից հետո երևաց արևը և ծիածան կապեց: Հողմը շառաչյունով փչեց և բացեց լուսամուտի փեղկերը: Նա արագ բացեց սենյակի դուռը և հյուրերին ներս հրավիրեց:

4. Օգտագործելով առարկա և գործողություն ցույց տվող բառերը՝ փոփոխելով կազմի՛ր նախադասություններ:

ա) արև, թռչուն, ամպ, երկինք, անձրև,

բ) ցրվել, փայլել, պարզվել, երգել, դադարել:

5. Կազմած նախադասություններն այնպե՛ս դասավորիր ու արտագրիր, որ ստացվի մի ամբողջական տեքստ: Վերնագրի՛ր: